## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2019 թվականի թիվ 118-Ա
ք. Երևան

## «ՀԱՅԿ-ՄԵԴԻԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի և 52-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ՀԱՅԿ-ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2019 թվականի հոկտեմբերի 16-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

1. Բավարարել «ՀԱՅԿ-ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության դիմումը և տալ ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն՝ վերահեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի գործողության ժամկետով՝ համաձայն Հավելվածի:

2. Սահմանել, որ «Շանթ», «VH1 Classic», «VH1 European», «MTV Rocks», «MTV Dance», «Nickelodeon Jr», «Paramount Comedy» և «Paramount Channel» ոչ սեփական հեռուստածրագրերը կարող են վերահեռարձակվել միայն Արթիկ քաղաքի տարածքում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 22
ք. Երևան

Հավելված
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի
2019 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 118-Ա որոշման

| Հեռուստածրագրի անվանումը | Թույլտվության ժամկետի ավարտը |
|---|---|
| «THT- Comedy»<br>«Friday International» | 31.12.2019թ. |
| «Շանթ» | անժամկետ |
| «VH1 Classic»<br>«VH1 European»<br>«MTV Rocks»<br>«MTV Dance»<br>«Nickelodeon Jr»<br>«Paramount Comedy»<br>«Paramount Channel» | անժամկետ |
| «НТВ Мир»<br>«Охотник и рыболов»<br>«Шансон-ТВ»<br>«Наука 2.0» | 31.12.2019թ. |